



## **ՈՐՈՇՈՒՄ N 7**

29 հունվարի 2021 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
2021 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով, լսելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանի զեկուցումը Երևանի պետական համալսարանի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին 2021 թվականի ծախսերը կատարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

**Հոգաբարձուների խորհրդի նիստը նախագահող՝**

**Ա. Չուբարյան**